

օրագրութեան հետեւեալ տողերէն կը տեղեկանանք, որ մեր Լեւոնի գերեզմանին կափարիչն ու վրայի պառկած արձանն ալ բերուած են հոս . « 6(*) . — *Ynq̄t̄us̄īn̄k̄an̄k̄er̄k̄* . Սպիտակ մարմարինէ պառկած արձան մը , որ կը ներկայացնէ հայկական Կիլիկիայի հարստութեան վերջին թագաւորը՝ Լեւոն Լուսինեան , սեւ մարմարինէ տապանաքարի մը վրայ պառկած (1) » : Ուրիշ ականատես մը իր 1792-ին հրատարակած հատորով կը մաղթէ « որ չգպին այս թանկագին յիշատակարաններու , եւ մատուռ պահպանուի՝ երբ զան կործանելու եկեղեցին , որ շատ նշանաւոր բան մը չունի այլ միայն գերեզմանները *Jeanne de Bourbon*-ի , . . . Հայոց թագաւոր Լեւոն Լուսինեանի , վախճանած *Տուրնէլի* պալատին մէջ , 1393 նոյեմբ. 29-ին , եւ կը զանուի խորանին ձախակողմը . . . (2) : » Այս երկու ժամանակակից եւ ականատես անձերու իրարու հետ չհամաձայնելուն պատճառն այն կը կարծեմ , որ հաջիս իր գիրքն հրատարակ չհանած՝ փոխադրութիւնը կատարուած վերջացած էր արդէն :

Փոքր-Աւգոստինեանց վանքը նախապէս գերեզմանաքարերու իրր պահարան ծառայելէ ետք՝ կանոնաւոր թանգարանի վերածուեցաւ , միշտ Լընուարի հսկողութեան տակ . բայց նոր կայսրութեան հաստատութեամբ՝ որոշուեցաւ մի քանի նշանաւոր եկեղեցիներ — մասնաւորապէս Սէն-Պընիի արքայաբանը — կրկին զարդարել Աւգոստինեանց թանգարանին մէջ պահուած արձաններով ու տապանաքարերով : Լընուար շատ հակառակեցաւ այս որոշման . բայց 1816 ապրիլ 24 թուակիր արքայական հրովարտակն հաստատուով ւարուած որոշումը , Լընուար ոչ միայն լռեց այլ եւ արքունի հրամանի գործադրութեան վրայ հսկեց , հակառակ իր սրտին : Եւ յիշատակարանները փոխադրուեցան Սէն-Պընիի արքայաբանը (3) : Այս փոխադրութիւնն ա՛յնքան անկանոն եւ ա՛յնքան հապճեպով կատարուեցաւ , որ շատ հուսկիւններ կտարեցան փճացան , եւ ի՛նչ որ փոխադրուեցաւ Սէն-Պընիի արքայաբանը՝

(*) Այսինքն բերուած յիշատակարաններէ վեցերորդը : Իսկ երբ Լընուար դարեւոք բաժնելով զանոնք իւրաքանչիւրին վրայ մասնաւոր քիւ մը դրաւ եւ բոլորին սրահերազարդ մեկ ցուցակն հրատարակեց , Լեւոնի սապանաքարին համար նշանակեց՝ քիւ 65 , ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ *Musée des monuments français*-ին մէջ :

(1) L. Courajod, *A. Lenoir, son Journal* ԷՆ., հս. Ա, եր. 1 :

(2) Jacquemart, *Remarques historiques* ԷՆ., եր. 231 :

(3) *Archives du Musée des monuments français*, հս. Ա, եր. 433 :

Տե՛ս նաեւ Raunié, *Epitaphier du vieux Paris*, հս. Ա, եր. դէ :